



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՐԴ

ք. Երևան

02.08.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/03

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.05.2017թ. թիվ 03/73-3/8492-17 գրությամբ «ԼԵԴ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 30.03.2017թ. թիվ 09/424 գրության հիման վրա, 17.05.2017թ. թիվ 03/73-3/8492-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «ԼԵԴ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգ:

2. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը 30.03.2017թ. թիվ 09/424 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարված «ՇՀԱՊԶԲ-15/8-1-2017(ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաջայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին հայտ է ներկայացրել «ԼԵԴ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովի 2017թ. մարտի 15-ի թիվ 4 որոշմամբ NN 3, 6, 7, 10, 42, 43, 49, 64, 65, 75, 126, 143, 145 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ԼԵԴ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ն: 2017թ. մարտի 15-ին ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում է կատարվել ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին մասով նախատեսված տվյալների ճշտման մասին: Մասնակցին ծանուցվել է նաև այն մասին, որ առաջարկվում է 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2017թ. մարտի 20-ը ներառյալ, ներկայացնել հրավերի 2-րդ մասի՝ հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Գնահատող հանձնաժողովի 2017թ. մարտի 27-ի թիվ 5 որոշմամբ արձանագրվել է, հետևյալը.

- «ԼԵԴ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով չի ներկայացվել՝ որպես «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող՝ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) պատճեն(երը), դրա (դրանց) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի (պայմանագրերի) կողմերի հաստատված պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (ակտերի) (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճեն(երը), կամ տվյալ պայմանագրի (պայմանագրերի) կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 2017թ. մարտի 23-ին տրված եզրակացության համաձայն՝ «ԼԵԴ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելուն նախորդող 3 հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմում է 0 (զրո) ՀՀ դրամ:»:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամկացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նշված նիստերին:

3. «ԼԵԴ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը.

Խորհուրդը դիմել է «ԼԵԴ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.05.2017թ. թիվ 03/73-3/8492-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նշված նիստերին:

4. ՍՑ-ԷՍ-2017/03 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 17.05.2017թ. թիվ 03/73-3/8492-17 գրությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ նաև Պատվիրատու)՝ 30.03.2017թ. թիվ 09/424 գրությունը և գրությանը կից ներկայացված փաստաթղթերը, «ՇՀԱՊՁԲ-15/8-1-2017(ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 15.03.2017թ. թիվ 4 և 27.03.2017թ. թիվ 5 արձանագրությունները, «ՇՀԱՊՁԲ-15/8-1-2017(ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ Հրավեր):

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՇՀԱՊՁԲ-15/8-1-2017(ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ նաև ընթացակարգ):

«ԼԵԴ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ն կազմակերպված ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրել է հայտ:

Հանձնաժողովը 2017թ. մարտի 15-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ «ԼԵԴ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ին ճանաչել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ NN 3, 6, 7, 10,

42, 43, 49, 64, 65, 75, 126, 143, 145 չափաբաժինների մասով, և նույն արձանագրության 4.1 կետի «ա» ենթակետով որոշել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) հարցում ներկայացնել առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Նույն արձանագրության 4.1 կետի «բ» ենթակետով հանձնաժողովը որոշել է ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2017թ. մարտի 20-ը ներառյալ, ներկայացնել Հրավերի 2-րդ մասի՝ «Հայտը պատրաստելու հրահանգի» 3-րդ բաժնով նախատեսված փաստթղթերը:

Սակայն, Հանձնաժողովը 27.03.2017թ. ժամը 11:30-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրությամբ մերժել է Ընկերության կողմից ներկայացրած հայտը՝ հետևյալ հիմնավորմամբ.

1. Ընկերության կողմից սահմանված ժամկետում և կարգով որպես «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող՝ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) պատճենը(երը), դրա (դրանց) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի (պայմանագրերի) կողմերի հաստատված պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (ակտերի) (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը(երը), կամ տվյալ պայմանագրի (պայմանագրերի) կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը չեն ներկայացվել:

2. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 2017թ. մարտի 23-ին ստացված եզրակացության համաձայն՝ «ԼԵԴ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է 0 (զրո) ՀՀ դրամ:

3. Ընկերության կողմից NN 143 և 145 չափաբաժիններով ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերում արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 3.1 հավելվածով՝ մասնագիտական փորձառության մասին հայտարարությամբ, հայտնել

և հավաստել է, որ պարտավորվում է հրավերով սահմանված կարգով ներկայացնել նույն հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ N 3.5 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ, և այդ ֆինանսական միջոցներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

Նույն հայտի N 4.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությամբ Ընկերությունը հայտնել և հավաստել է, որ առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին, և պարտավորվել է ներկայացնել իր կողմից հաստատված՝ հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 47-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղուղ. զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը.

2) ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 67-րդ 1-ին ենթակետի կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով. հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Ընթացակարգի հրավերի 7.5 կետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում նշված հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

2) ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «ԼԵԴ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չեն ներկայացվել, ինչպես նաև սահմանված ժամկետում Ընկերության կողմից չեն շտկվել NN ընթացակարգի 143 և 145 չափաբաժինների մասով ներկայացված անհամապատասխանությունները:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «ԼԵԴ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է 0 (զրո) ՀՀ դրամ:

«Գնումների մասին» ՀՀ ծրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)

- 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

- 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

- 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 31-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Խորհուրդը գտնում է, որ.

- հրավերով նախատեսված՝ որակավորումը հիմնավորող փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում չներկայացնելով՝ Ընկերությունը խախտել է ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 3.1 հավելվածով ստանձնած՝ հրավերով սահմանված կարգով նույն հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու պարտավորությունը,

- Ընկերությունը ներկայացրած հայտի N 3.5 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարությամբ, հայտնելով և հավաստելով, որ ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ, և այդ ֆինանսական միջոցներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը՝ ներկայացրել է կեղծ տվյալ:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «ԼԵԴ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Խորհրդին ներկայացված պաշտոնական ընթացակարգով առկա չէ որևէ տեղեկատվություն կամ ապացույց այն

մասին, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու նախորդող տարվա ընթացքում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված որևիցե խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «ԼԵԴ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց


ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.05.2017թ. «ԼԵԴ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման

խորհրդի անդամ՝



ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ